



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3277

3278

3279

534

---

Q-60

9-4 W 86

~~219~~

2010

ԲԱՆԿԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԿԵԱՆ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Ի

*1457*

ԹԻԻ  
1 ԵՒ 2

ZUSAC ԱՌԱՋԻՆ

ԹԻԻ  
1 ԵՒ 2

Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

*1-22*

Ե Ի

Ֆ Ռ Ա Ն Ք Լ Է Ն

ՅՈՒՆՈՒՍԸ ԵՒ ՓԵՏՐՈՒՍԸ

15

15



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ԱՇՃԵԱՆ

1884

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

1. Բաժանորդագրուծինք սարեկան են:
2. Կնասարակուի ամեն ամսոյ 15 ին:
3. Տարեկան 12 րիւերու գինն է.
- Ա. Տաճկասանի համար 6 զրշ:
- Բ. Տաճկասանէ զուրս, ամեն օտար քաղաքաց հա մար մէկ ու կէս (1 1/2) ֆրանք:
4. Բաժանորդագրուծինք կսկսին ամեն յունվար ամսէ:
5. Բաժանորդագրուծինք կանխիկ վճարելի են:
6. Փօսայի ծախքը խմբագրութեանս կվերաբերի:

Նամակ եւ ծրար կընդունուի հետեւեալ նասցելի.

ՏՕՔԹՕՐ ՄԱՆՈՒԼԷԼ Բ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ

Կ.Պոլիս.-Բերա. Թարա սաշի, Զամպար փողոց թիւ 12

539.  
4-30  
Կ:

Թ Ա Ն Գ Ա Ր Ս Ն

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ե Ա Ն

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԻՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՏՕՔԹՕՐ Մ. Բ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ

ԱՇԱԿԵՐՏ

ՍՍՄԱՆԵԱՆ ԵՒ ԳԱՂՂԻՈՅ ԲՈՇԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԱՑ

Բ Ժ Ի Կ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ

Ե Ի

Ա Ր Գ Ո Ւ Ն Ի Պ Ա Ն Ա Տ Ս Ն

معارف نضارت جليله سلك رخصتيله طبع اولتشد



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ԱՇՃԵԱՆ

1884

3209  
4590  
N1457



9275



1917

41

Ն Ո Ւ Է Ի

ՅԱՐԳԱՆԱՅ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԽՄԲԱԳՐԷՆ

Ա Ռ

ԳԵՐԱԳԱՏԻ ԶԳ ԻՄՈՑ

Տ. ՅԱԿՈԲ ԱՒԱԳ ԲԶ. ՍՈՒՐԷՆԵԱՆՅ

ՄՈՍԿՎԱՅԻ

Նախագահ

Հոգեւոր կառավարութեան

Անդամ խորհրդարանի

Գասպ. Անկեյանցի

Վարժապետ կրօնի

Լազարեանց ձեմարանի

Ա. կաթեմիայի

վաճառաշահ ուսմանց

Կայսերական

Արուեստական վարժարանի

Աղեփանդեան

Զինուոր, Ուսումնարանի

Կոոսանդեան

Սահմանաչափ ձեմարանի



ՊԷՆՃԱՄԷՆ ԿՐԱՆՔԼԷՆ

2 0 0 2

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆՆ

Երկրագնտիս բնակիչք, որոնց թիւն այսօր  
1,200,000,000 կենթադրուի, հազիւ 100ին  
տասը լուսաւորեալ, այսինքն 100էն 90ը վայ-  
րենի, տգէտ կամ հէս լուսաւորեալ ժողո-  
վուրդ կկազմեն: Սոքա արհեստին, արուես-  
տին և գիտութեան տեղեակ չըլլալով, կեան-  
քերնին լուսաւորեալ ժողովրդոց կեանքէն  
խիստ ստորին, ցաւալի եւ ողորմելի վիճակի  
մէջ կանցնեն. ինչպէս անապամներու մէջ  
ապրող ժողովուրդք՝ ուղտերով, լեռնաբնակ  
ժողովուրդք՝ ջորիներով, և դաշտայինք ալ  
եզակիր կառքերով ժամանակ կանցնեն. ուր  
անդին արհեստն, արուեստն ու գիտութիւ-  
նըն իրենց օգնական, պաշտպան և առաջնորդ  
ունեցող ժողովուրդք, երկրագնտիս որ կողմն  
սր ըլլան ու գտնուին, իրենց ժամանակը  
ճամբորդութիւննին և առուտուրնին շոգե-  
կառքերու, շոգենաւներու, հեռագիրներու  
և այլն և այլն միջոցներով կկատարեն, փոխա-



նակ ճարպի և ձկան իւղով լուսոյ, կազ և ե-  
լեկդրական լոյս կգործածեն, լեբանց վայ-  
րենի անասուններով և ծովու եգերքն ըստ  
պատահմամբ գտնուող կամ իյնող ձուկերով,  
անմշակ կամ վայրէջի ծառոց պտուղներով  
ապրողներու գէժ, լուսաւորեալ ժողովուրդք  
բազմատեսակ որձի փափուկ միտերով, ծովին  
մէջ գտնուող ամենաբնտիր ձուկերով և հո-  
ղին երեսն ասող ու հասնող կանաչեղեննե-  
րով, համով ու հոտով անթիւ պտուղներով  
կապրին. այսպիսի ժողովուրդք ոչ միայն ու-  
նեցած սնունդն դո՛ւ են և կըլլան, այլ մանա-  
ւանդ որ ըստ օրէ աւելի բարեկեցիկ վիճակ  
տէր ըլլալու ետեւէ են. իսկ անդին վայրենի,  
տգէտ կամ կէս լուսաւորեալ ժողովուրդք, սե-  
րու նդէ սերունդ իրենց նախնեաց սովորու-  
թեանց և աւանդութեանց տէր մնալով, ան-  
փոփոխ կամ դադարական վիճակի մէջ կառ-  
րին: Ինչ որ ըսինք, նոյնը կվերաբերի բնա-  
կարանաց, զգեստուց, լեզուաց, ամեն տե-  
սակ աշխատութեանց, գործողութեանց, փա-  
փաքանաց. մէկ խօսքով, մարդիկ, մարդկա-  
յին ճակատագրոյն արժանի վիճակով ապրե-

ցընելու կարող ըլլալու համար, ինչ որ կա-  
րելոր եւ պէտք է, ամենքն ալ արհեստին,  
արուեստին և գիտութեան, բարի, անսպառ  
ու անվաստան դանձէն առածնին գործածե-  
լով երջանիկ ըլլալու վրայ են:

Նստախնամութեան մեզ շնորհած, պար-  
գեւած կեանքը ցաւօք և հեծութեամբ, զա-  
նազան նեղութիւններով, տանջանքներով և  
հիւանդութեամբ անցնելը, մեզ, մարդոցս  
համար մեծ և աններելի յանցանք մ'է, որոյ  
համար անկասկած եմք, թէ ի վերուստէն մեզ  
Գիտողին սիրտը տխուր է, տեսնելով Ղալա-  
թիոյ բեռնակիրներն (որք ըստ մեծի մասամբ  
Հայ են) Ասիոյ ջորեպանները և Սև ծովէն փայտ  
ու տախտակ բերող և ասոնց նման ուրիշ ան-  
համար թշուառներն: Իսկ ընդհակառակը  
խիտ սերախ կըլլայ, տեսնելով սովորաբար  
թուող շոգեկառքերը, մէկ ժամուան մէջ քտան  
մղոն ճանբայ տանող շոգեհաւները, բեռ կրող  
կառքերն և ասոնք լեցնելու և պարպելու ծա-  
ռայող գործիքները, գործարանները, հան-  
քերը, հեռագիրներն և այլն և այլն, որոնց  
ամենն ալ, ինչպէս և շատ ուրիշ գիւտեր,

մարդոց բարեօրէկեցութեան չե՞ն մի ծառայեր. եթէ այս ըսածներն իս ճշմարտութիւններ են, որոնց վրայ տարակուսի՞ն անգամ աւելորդ և մեղք է, ուստի հարկ և անհրաժեշտ է, թէ ամեն ոք պէտք է աշխատիլ արհեստին, արուեստին և գիտութեան յառաջագիմութեանը. մարդ ինչ որ ալ ըլլայ, ուր որ ալ ըլլայ, ինչ գործով ալ որ զբաղի, աշխատիլ, ջանալ պէտք և պարտաւորեալ է և ըլլալու է, իր վիճակը միշտ օր ըստ օրէ աւելի բարեօրէկու. այս ալ կարելի է միայն գիտութեամբ և լուսաւորութեամբ :

Ով որ աւելի հմտութիւն և գիտութիւն ունի, նա աւելի պատիւ հարստութիւն, և հետեւաբար բարեօրէկեցութիւն կրնայ ունենալ :

Ըսինք, թէ երկրագունտս, այսօր 1,200,000 000ի չափ բնակիչ ունի . յայտնի է, թէ սոյն բնակիչք կգտնուին հին ու նոր աշխարհքին մէջ . ամենքն ալ իրաւ է որ մի հօր և մի մօր զաւակներ են, բայց ազգաւ, կրօնիւ և կլիմայիւ կղանազանութիւն իրարմէ . իրաւ է որ Անդամազննական և Բնազննական գիտու-

թեամբ կապացուցուի թէ մարդս ինչ որ ալ ըլլայ, Օսմանցի, Գաղղիացի, Անգղիացի, Ամերիկացի, Ռուսիացի, Պարսիկ, Ափրիկեցի, Հնդիկ կամ Չինէացի, ամենքն ալ միեւնոյն կազմաւածքն ունին շնչելու, սնանելու և ծնանելու . նմանապէս, կհաստատուի թէ մարդս ուր որ ալ ըլլայ, ի Տաճկաստան, յԵւրոպա, ի Ռուսաստան, ի Պարսկաստան, ի Հնդիկ կամ ի Չինաստան, յԱփրիկէ կամ յԱմերիկա, ամենքն ալ խորհելու, խոկալու և խօսելու միևնոյն ուղեղն և լեզուն, ինչպէս և միևնոյն թօք, սիրտ, երակ, ստամոքս ունին շնչելու և մարսելու . իսկ եթէ մարդիկ կտարբերին իրարմէ, չէ թէ բնապէս և ըստ կլիմայի է, Անգղիացի, Գաղղիացի կամ Ամերիկացի ըլլալուն, այլ քիչ կամ շատ իրարմէ տարբեր կամ աւելի պակաս գիտութեան տէր ըլլալնուն համար է : Ռուսի ըսածնիս հաստատելու համար, քննենք, թէ երկրագնտիս 1,200,000,000 բնակիչները բազկացընող զանազան ազգաց մէջ, ո՞ր ազգն է ամենէն պատուաւորն, ամենէն հարուստն և յիանգամայն ամենէն բարեկեցիկն . անշուշտ

և տարակոյս չկայ, թէ ամեն ոք մեզ հետ կրնկերանայ ըսել, թէ այն ազգն է Յրանքլէնի ազգն, ըսել կուզենք Ամերիկացին, որ այսօր կպարծի ըլլալ 1,200,000,000 բնակչաց ամենէն հարուստն և ամենէն բարեկեցիկն, որովհետեւ ամենէն գիտունն է: Խօսքերնիս աւելի զգալի ընելու համար, կրնանք ըսել թէ ինչպէս որ մեր մէջ գրեւ ու կարգաւ գիտցողը մատով ցուցնելու չափ քիչ է, Ամերիկայի մէջ ալ գրեւ ու կարգաւ չգիտցողը մատով ցուցնելու չափ քիչ է, ինչ մեծ և անբաղդատելի տարբերութիւն:

Եթէ ունինք միտիթարուելու կէտ մը, այն է Միացեալ Ընկերութիւն մը ունենալնիս, որոյ նպատակն է, կարգաւ ու գրեւ չգիտցողին, կարգաւ ու գրեւ սովորեցնել:

Արդարեւ, ով որ ազէտը լուսաւորել կաշխատի ու կօղնէ, նա մարդասէր է և մարդկութեան բարերար: Անցեալ տարւոյ սեպտ. և հոկտ. ամիսներու տզգային լրագրաց մէջ Միացեալ մարդկօգուտ Ընկերութեան 1882-1883 տարւոյ տեղեկագիրը կարդացինք, որով սովորեցանք, թէ մինչև այսօր ընդա-

մենը 23 վարժարաններ բացած է չորս շրջանակի մէջ, ինչպէս,

ա. Տարուբերան	10 դպրոց,
բ. Վասպուրական	5 »
գ. Տաւրոս	5 »
դ. Կիլիկիա	5 »

Աւանդեալ ուսումներն են Մայրենի լեզու, Կրօնագիտութիւն, Ուսողութիւն, Տոմարակալութիւն, Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Տաճկերէն, Գաղղիերէն, Գծագրութիւն և Եւրոպական ձայնագրութիւն:

Յուսամք թէ արդի և նորընտրեալ Տնօրէն Ժօզովն ալ չմոռնար վերոյիշեալ ուսմանց կարգն անցնել Ասողմարանութիւն կոչուած գիտութիւնն ալ, որ ոչ միայն մեծ և կարն որ պէտք մ'է, այլ և անհրաժեշտ և ստիպողական է:

Եթէ Միացեալ Ընկերութեան սոյն տեղեկագրոյն մէջ ցաւելու կէտ մը կայ, այն է, ըստ թուաբանական կամ ճշմարիտ հաշւոյ, Ընկերութեան 50,000 շուրուչի բացը նախորդ տարուան վրայ:

Յաւելու և յուսահատելու կէտ մ'է նաեւ

բաժանորդաց թուոյն քիչութիւնը , Հայոցս թուոյն հետ բաղդատելով , վասն զի մինչդեռ ամսական բաժանորդագին քառասուն վարանի ամենաչնչին գումար մը որոշուած է , ինչպէս կըլլայ որ ամբողջ բաժանորդներ հազիւ երկու հազար այսչափ ըլլան , ըստ հաշոյ անգեկագրոյն :

Իզմիրի Արշալոյս Արարատեան անդրանիկ լրագրոյն մարդասէր խմբագիրը կըսէ իր 1257 թուոյն մէջ , ինչպէս ընթերցողք գիտեն թէ Հրէից Ալիանս Իզրայէլիթ կոչուած Բնկերութեան նպատակին կհամապատասխանէ , ինչ հսկայ գործեր կկատարէ , որոյ սլաշտգանը թէև ըլլայ աշխարհիս ամենէ հարուստ Վարդը , սակայն բաժանորդաց թիւն իսկ ահագին է , Հրեայ ժողովրդեան թուոյն հետ համեմատելով . . . » :

Առ ընթերցողս ուզեալ այս տողերուս միակ նպատակն է , թէ ամեն ոք անխտրաբար աշխատելու է , տգէտը լուսաւորելուստի մեր ամենուս պարտքն է Միացեալ Բնկերութեան օգնել , որոյ օգնելու և նպաս-

տելու համար հարստութեան կարօտ չէ . բաւական է որ 4—5,000,000 Հայոցմէ 10—20 հազար Հայ , ամիսը միայն 40 փարայ վճարեն , որով սոյն Բնկերութիւնն ալ խրտխուսեալ և քաջալերեալ , ոչ միայն բացած դպրոցաց թիւը կաւելցնէ , այլ միանգամայն դասատուներ , մանաւանդ մանկավարժ դասատուներ հասցնելու միջոցներուն վրայ խորհելու սիրտ , ոյժ և ժամանակ կունենայ :

Երկու տարիէ ի վեր է , որ սկսած եմք «Մատենադարան Ժողովրդեան» անուն Առողջաբանական հաստորիկներ հրատարակել . որոնց ստիւթը քաղցր պարտաւորութիւն մ'է հրապարակու մեր խորին շնորհակալութիւնները մատուցանել մեր բոլոր այն յարգելի և մարդասէր Բարերարաց և Գործակալաց , որք բարեհաճած են պաշտպանել մեր սոյն գործն և չխնայել պարտաւորաշաճը վասն Նորին յարատեւութեան :

Սոյն համակրութենէ խրտխուսեալ , կսկսինք այսօր «ԹԱՆԳԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ» անուն գործս ալ , որոյ նպատակն է , Ազգային և օտար Ազգաց մէջ գանուող Երևելի Արանց

կենսագրութիւնն ընել, և այս ալ ոչ թէ միայն ընթերցողներն գրասցելու համար, այլ համոզել նաևս թէ գիտութիւնն որչա՛փ կարևոր է :

Արդարև նախնի իմաստունք, դաստիարակութեան և գիտութեան սէրն ու գեղարուեստից մշակութիւնն ամեն բանէ նախապատիւ համարած էին : Ինչպէս Տէմօֆիլ, ամենէն հաստատ հարստութիւնը, մտաց մշակութիւնն է ըսած : Տիօփէն, ուսմունքն երիտասարդաց խոհեմութիւնը, ծերոց մխիթարութիւնն, աղքատաց հարստութիւնն եւ հարուստներուն ալ զարդարանքն է կըսէր: Արխատաէլ ևս, գիտունն ապրող մարդուն, իսկ տգէտն ալ դիակի մը նմանցուցած էր : Ըստ սոյն Փիլիսոփային, գաւակք աւելի երայխտապարտ ըլլալու են իրենց ծնողաց, անոնցմէ ընդունած ուսմունքէն, քան թէ ժառանգած հարստութենէն, որովհետեւ կըսէ՝ հարըստութիւնը կրնայ փճանալ. իսկ ընդհակառակն ուսմունքը կամ գիտութիւնն առաջնորդ է երջանիկ ծերութեան : Կպատմուի թէ Տէմօքրիտ, ինքզինքը բոլորովին ուսման

տալով, ունեցած բոլոր հողերն անմշակ թողուց: Իրեն այնպէս թուեցաւ, թէ միակ երջանկութիւնը գիտութեան մէջ էր. ինչպէս եղան նաևս Արիսթիա, Քըրասթէս և Սնաքսակոր :

Սոսիկեանք՝ գիտութիւններն իբրև առաքիւնութիւններ կնկաւէին. բնութեան հայեցողութիւնն՝ Էպիկիւռի համար ամենէն գերագոյն հեշտութիւնն էր : Պիդալոր, Հիբոկրատ և Հերոդոտ, երկրագնդիս ամենէն հեռւոր կողմերը ճանապարհորդեցին, սովբելու որ և է նոր բան մը գտնելու յուսով :

Տէմոսթէն, շատ գիշերներ շէր քնանար : Շատ կենդանար, երբ տեսնէր, թէ գործաւոր մը իրմէ կանուխ գործի սկսած էր :

Լիզերնի Կարտինալն, որ իր կենաց մեծագոյն մասն աքսորի թշուառութեանց մէջ անցուց, առաւօտներն արշալուսին կելնէր, որով կարող եղաւ յիսունէն աւելի հատորներ գրել, մեռաւ 80 տարեկան գրիչն ի ձեռին : Բնագէտն Բլին, կկարդար, կճառէր կամ կգրէր բաղնիքի մէջ մինչև, ու կերակուր ուտելու միջոցին . ի շնորհս այս զարմանալի յարատեւու-

թեան կարող եղաւ խիստ քիչ միջոցի մէջ (զի հազիւ 45—50 տարեկան կար մեռած տենն) Պիւֆօնի ըսածին պէս, բնութեան նման բազմաճիւղ, այն մեծ գործը գրել, որ կը խօսի ամեն տեսակ բնական արհեստից, արուեստից և գիտութեանց վրայ: Երիտասարդ Բլիւնը կըսէր, թէ ուսմունքը մշակելու համար գողցուած, պարտազ անցած ժամանակը կորուսեալ համարելու է, և կտրանջար, թէ ինչո՞ւ համար արդեօք պէ՛կոտնիւնը պարտազ օրէնքի չէ սքեղ շոտնի:

Թուրիուսի օրէնագէտն եզրը, Քաուօնտաս, տգիտութիւնն ամեն տեսակ մոլութեանց մայրը նկատած էր. կպնդէր թէ՛ տղայք անխտրաբար գիտութեանց և գեղարուեստից մէջ պէտք է մշակուին:

Տղայոց դաստիարակութիւնը, կըսէ Արիստոտ, օրէնագէտին ամենէն կարեօր և անհրաժեշտ պարտաւորութիւններէն մին է. զանի զանց առնելը, մարդկութեան մարմնոյն վրայ մեծ վէրք մը բանալ է:

Ժիւլ Բ. Պասլն որ պատերազմասէր էր, բայց երբ Միշկլ—Անժ եկած էր իր արձանը շինե-

լու, իննգրած էր իրմէ, թէ պարտազ մնացած ձախ ձեռաց մէջ, փոխանակ զրքի, թուր մը դնել. այսու ամենայնիւ յաճախ կրկնած էր, թէ գիտութիւնն աղքատաց արծաթը, հարստաց՝ ոսկին և իշխանաց համար արծաթ է:

Մտօք—Օսէլ խրատ կուտար քաղաքագէտ մարդոց, որք կեանքերնին բոլորովին քաղական գործերով չանցնեն: Յիմարութիւն է կըսէր, այս խմաստուն կայսրն, անդադար արտաքին գործերով զբաղիլը, սիրտն եւ խնացականութիւնն ալ մոռնալու չէ:

Շատ բան սովորելու է, քիչ մը գիտնալու համար կըսէր Մօնթէսքիէօ:

Տաղանդը մեր զարմանքը գրգռելու առաւելութիւնն ունի. բայց որչափ քիչ մարդիկ ընդունած են բնութենէն իր աստուածային կայծակն: Երկար և յարատե աշխատութիւնն ալ իր օգտակարութիւնն ունի: Ամեն ոք հնարող չիրնար ըլլալ, այսու ամենայնիւ պէտք չէ, զանոնք իբրև ծոյլ նկատել, ինչպէս ըրած է Քլէնթիլիէն: Ասոր օրինակին հետեւելով, Պարթեզ բանի տեղ չէր

108

դէնք ուրիշներուն ըրած փորձառութիւններն ու գիտողութիւնները ժողովելով գիրք չինոյնները : Մարդոց օգտակար եղողներուն մէջէն , կըսէր , սոյն հռչակաւոր բժիշկն , աւնոնք են միայն , որոնց դէմ ապերախտ կըրնայ ըլլալ առանց անարգարութեան :

Ինչպէս, ալ աւելի անիրաւ էր Թիսօ, բազմատեղով բազմահմուտները Հնդկաց մուրացկաններուն , որք յօժար կամօք խստակեաց կըլլան , ստաննելով ինքզինքնին գիրքեր, ձեռագիրներ , հին արձանագրութիւններ , անլուծանելի նշանագիրքեր հաւաքելով , որք կըսէ , որ և է օգտակարութիւն մը չունին առընկերութիւնս : Եթէ առանց Սոմէզի , Ըջալիճէոի , Մէոսիուսի , Քազազոնի անուանց , սոյն անբաստանութեանց խեղկատակութիւնը չհերքուէին, բուսական պիտի ըլլարն շմարել տալ , թէ Թիսոյի քննադատութիւններով , Շամբոլիոն նշանագրոց բանալին չպիտի կարենար գտնել :

Հնութեանց հաւաքիչք , զորս կծաղրէր Պրիւյիէր , թէ բնութեան խորչերը , թանգարանները , մուսարանները խառնելով մէկ տե-

ղէն հին դրամ մը , միւս տեղէն ձեռագիր մը, երբեմն արձանի կտոր մը, որք օր մը Քիւլիէյի կամ իրնման ուրիշներու մեծապէս պիտի օգնէին, հին ժամանակաց և դարուց չղթայն գտնել , որնոր շատ կողմերէն կոտորուած է :

Ճշմարտութիւնն այնքան սիրուն է , կըսէ Լըլօնկ , թէ և ոչ մի բան զանց առնելու է զանի գտնելու շամար, նոյնինքն ամենափոքր բաններուն մէջ :

Պլատոն , Պլուտարք , Պոսսիւէ , Ֆենելօն , Սոկրատ , որք վարդապետ էին ճշմարտութեան արդարութեան և գեղեցկութեան , ըսած են , թէ լաւ է ուսնիլ առանց նպատակի, քան թէ բան մը չընել և տգէտ մնալ :

Բնութիւնը խառնելով և քննելով է , որ քիմիական գիտութիւնն ստեղծուած , ինչպէս և բնութեան բոլոր մարմնոց երեքի բաժանումը գտնուած է :

Ամեն ուսմունք նպատակ մ'ունի , ամեն մտածողութիւն պիտոյքի մը կպատասխանէ ինչ որ ալ ըլլայ արհեստ մը, միշտ օգտակար է մարդուս :

Պատմութիւնը , Մաթեմատիքան , Բանաս-

տեղծութիւնը , Գեղարուեստը , Փիլիսոփայութիւնն , ամենքն ալ սնունդ են մտաց , սփոփումն ցաւի , և մխիթարութիւն ձայնորդութեան :

Արշիմէա , Քէրլէա , Լիննէ . Տէքարթ , Նէվթօն , Ամրէա , Առակօ , ար Հիւմպօլտ և հազար ուրիշներ , ամենքն ալ մեծ սէր ու փափաք ունէին արհեստի , արուեստի և գիտութեան :

Կլարտէն , իր հայրենիքը դառնալուն : բոլորովին պատմական աշխատութեանց տուաւ ինքզինքն , այնպէս շատ օրեր սենեակէն դուրս չէր ելնէր և կաշխատէր շարունակ տաանց կերակուր ուտելու և քնանալու :

Լոսսի կպտտմէ , թէ վիէթ անուն թուաբանն , երեք օր առանց քնանալու շարունակ աշխատեցաւ , Ռիշէլիէօյի տուած մէկ խնդիրը լուծելու :

Յայտնի է , թէ ի՞նչ մեծ խնամք կտանի հեղինակ մը , տարիներով աշխատասիրած ձեռագրոյ՝ , ի՞նչ մեծ սիրով կգգուէ իր անխոնջ աշխատութեանց գիւտը : Չկայ զաւակ մը , որ մօր մը սրտին այնքան փափուկ անձ-

կութիւն ներշնչէ . ամեն բան գեղեցիկ է իր աչաց . իր տաղանդին և իր աշխատութեան գործոց մէջ ամեն բան սիրելի է ,

Քլեւթէր . իր ամենէն ընտիր գործն եղող Սոփոսի խաբագրութեան պարտապելու ատեն գիշեր մը քունէն աթիւնցաւ փայլակի ձայնէն վախնալով որ չըլլայ , թէ իր ձեռագիրը կայծակէն այրի , անմիջապէս անկողինէն ցատկելով , աճապարանօք առաւ ձեռագիրն և անկողինին մէջ բերելով , քովը պահեց :

Պուստաքօթի գիտուն պատմաբանն , որ շատ տարիներ , դեսպանական պաշտօններ վարելէն յետոյ , Քօլօնիա քաջուելով , յարատե կաշխատէր , ուր օր մը իր նստած տունէն հրդեհ ելլելով , թանդարանն ու բոլոր ձեռագիրներն այրելուն , անմիջապէս հետեալ օրը մեռաւ կահիծէն :

Այսպէս եղաւ նաև գիտնական Ռիւտպէքի վիճակն , որնոր բազում տարիներ աշխատելէն յետոյ , պատրաստուած էր Սիւէտիոյ ծագման և հնութեանց վերաբերեալ մեծ գործը հրատարակել , 1702 թուականին Իւրսալի հրդեհէի ատեն կորսնցնելով զանի , ցաւէն անմխիթար մեռաւ :



Երբ Ֆրոնէ , սովրիլ ուզեց , թէ ս'րն է  
 Բըռաքսիթէլի ամենէն ընտիր գործն , ըսել  
 տուաւ թէ գործարանը կայրի կոր . «կորուս-  
 եալ եմ» , պօռաց ինքնիրէն , եթէ Սաթիւս և  
 Քիւրիտօն անուն գործերս այրեցան :

Սենեկայ և Թասիթ կպատմեն , թէ Թիպէս  
 կամ իր ծերակոյտը , Լասիէնուսի , Քասսի-  
 ուս Սեվեռուսի և Քոէմուլթիուս Քոռտուսի  
 ձեռագիրներուն ամենն ալ այրելու դատա-  
 պարտութուն վրայ , խեղճերը չկարողանալով  
 տանիլ այս կսկիծն , անձնասպան եղան :

Ճէնէփիայի նախապաշարեալ դատաւորք  
 Սիւվէթի բոլոր գիրքերը , անհաշտ Քալվէնի  
 դժբախդ զոհ ընելու պատրաստուած վայ-  
 տակոյտին վրայ նետել տուին : Բայց , թէ  
 պատահմամբ , կամ թէ Սիւվէթ , իր սոսկալի  
 տանջանաց մէջ , ջանքեր ըրաւ իր գրուածոց  
 ընտիրն եղող , վերակոնֆուսիոսի տրիստիտոսի  
 անուն գործը կրակին մէջէն ազատել , որոյ  
 մէջ կգտնուին արեան չըջանի վրայ թանկա-  
 գին տեղեկութիւններ , փայտակոյտէն վար  
 ինկաւ : Արդարև , սոյն գործը ներկայ եղող-  
 ներէն մէկը ժողվեց , որ այսօր կգտնուի ազ-

գային թանգարանին մէջ , որոյ մէկ քանի  
 խանձած թղթերը կտեսնուին : Ո՛ր գիտէ ,  
 մաղթեմ , եթէ ընթերցողներէն պատահի  
 զայն տեսնելու և ըսածս հաստատել :

Գիտութեան հետևողք միայն կարող են  
 հասկնալ , ուսման համը , թէ ի՛նչ մեծ զուար-  
 ճութիւն կճաշակէ մարդս անդադար , կրկին և  
 կրկին կարդալով բանաստեղծ ից ու փիլիսոփա-  
 յից գործերը , նախնի դարուց պատմութիւնն  
 աչքէ անցնելով , մեծ տաղանդներուն խորհրդ-  
 դածութեանց գործերով , նոցա փորձառու-  
 թեամբք մեր հետազօտութիւնները լուսաբա-  
 նելով , նոցա գիւտերով մեր միտքը մնանելով  
 ինչպէս և մեր հոգին նոցա իմաստութեամբք :  
 Շատ տնգամ , կենաց կարճատևութեան վրայ  
 կգանդատուի , բայց պատմութեան ուսմամբք  
 դարեր'ապրած չե՛նք մի ըլլար , առանց մասնա-  
 կից ըլլալու այն բազմաթիւ արիւնծօտ յեղա-  
 փոխութեանց և պատերազմներուն : Արդ արև  
 կգանենք նախնի դարուց պատմական սոյն  
 մեծ ճամբորդութեան մէջ , զվեղ չմատնող  
 բարեկամներ , օրէնսօգէտներ , փիլիսոփաներ ,  
 բանաստեղծներ , գիտուններ և այլն , որոնց

ամեն մէկն իր առաքինութեանց օրինակը մեզ կրնծայեն և կառաջնորդեն զմեզ փառաց փռուսքն կրից :

Ըստ կիկերոնի . բնութեան հետազօտութիւնն և ճանաչումն , ոչ միայն երջանիկ կենաց մը հաճոյքն են , այլ նաև ձախորդութեան մէջ միտթարութիւն մը : Իր Առեփեփ անուն գործը պատրաստելու ատեն , նկատել կուտայ թէ , Թուլիա , իր աղջկան մահուան առթիւ ունեցած ամենամեծ ցաւէն քաղաքական գործերէ քաշուելուն , փիլիսոփայութեան մէջ միայն իր ցաւին դարման կգտնէ , և կըսէ իր քաղաքացիներուն , թէ դատարարակութեան ծառայող զբաղմունքէն աւելի օգտակար և ամենէն աւելի գրօսանք մը չէր ճանչէր : Ամենէն տխուր ու մութ բանս մը , ամենէն խիստ աքսոր մը կրնայ քաղցրութեամբ տարուիլ ուսմամբ :

Քաջն Բէսքէր , որոյ համար , Ֆրանսուսայսպէս կըսէր , թէ առանց Անթուան տը Լէվի , Շատլը—Սէնթ առաջին զօրապետն եղած պիտի ըլլար , Ռափանի մէջ բանտարկել տուաւ ուր իր առանձնութեան սրտնեղութիւնները

փարատեց , սիրոյ վերաբերեալ խօսակցութիւն մը գրելով , զոր իր վիքթօրիա Քօլօննա անուն կնոջ նուիրեց :

1666 մայիս 1ին , Բօս—Ռօյեալի վերատեսուչ ը Մէթըը տը Սասի , Գաղղիոյ հօշակաւոր Պատթիլի մէջ բանտարկուած ատեն , Աստուածաշունչը թարգմանելու գրադեցաւ , որոյ նմանը մինչև այսօր եղած չէ , և տպեալ է 52 հատորներով : Այս մեծ գործը կատարած էր 2 տարուան մէջ , երեք անգամ սըրբագրելով :

Տէմէթրիուս տը Ֆուլէս . Աթէնքէն քստորուած Բըթօլէմէ Լակուսի քով առտնձնացաւ , որոյ օգնական եղաւ , Աղիքսանդրիոյ թանգարանն յօրինելու : Տէմէթրիուս , որ աչակերտ էր Թէոֆրաստի . իր քստորին մէջ բազմաթիւ գործեր գրեց , որոնց ամենն ալ կտրուած են դժբաղդաբար :

Ուսմունքն , աշխատութիւնն և գիտութիւնը պէտք են նկատուիլ առաքինութեանէն յետոյ ամենէն մեծ հարստութիւնք : Այս առթիւ , Պաքօն , խիստ իրաւամբ դիտել կուտայ , թէ պոսնիկներուն շատերը վերջա-

պէս վանքը կը բաշտուին , ինչպէս անձնասէր և և հպարտ վեհապետաց ծերութիւնն ալ միշտ տխուր և մեղամաղձոտ եղած է : Իսկ ընդհակառակը կը տեսնուի , այն որ գիտութիւնը կսիրէ , բնաւ չկշտանար . վերջապէս պէտք է ճանաչել , թէ իմացական աշխատութիւնն խանգարեալ և անկարգ կիրքերէն աւելի պակաս կանխաձագ մահեր կպատճառէ , որք մարդուն կազմուածքը կհալելցնեն , տաղանդը կյուզեն և իրենց գերիները վերջապէս գերեզման կիջեցնեն :

Պղատոն կգոչէր , թէ , երջանիկ են այն ժողովուրդք , որոնց թագաւորները փիլիսոփայ են :

Երբ 1880 գեղտեմբեր ամսոյն , պարոն տը Շըմէնայինկ , Աւստրիոյ նախարար կոչուեցաւ «*Գիտութիւնն է կարգութիւնը*» ըսաւ որ պիտի ըլլայ բարձրակարգութեան սկզբունքը : Պէտք է կարծել կամ հաւատալ թէ գիտութիւնը , մարդոց իմացականութեանց աստիճանը բարձրացնելով , փնասակար կամ հակառակ է կրօնից : Ընդհակառակն , յաղագս ընութեան , գիտութեան ամեն մի յաղթութիւն կամ գիւտ ,

առիթ է Աստուծոյ մեծութիւնն և անհուն կարողութիւնն յայտնելու : «*Երկինք պատմեն զփառս Աստուծոյ և . . .*» :

Գիտութիւնն իր ամենաընդարձակ նշանակութեանը մէջ ճշմարտութեան յայտնութիւնն է : Զի ճշմարտութիւնն է , Աստուծոյ ճանաչումն , սկիզբն և պատճառ ամենայնի , ճանաչումն մարդոց , ստեղծեալ նման իր պատկերին . ճանաչումն բնութեան՝ իրմէ անեալ անհամար գոյութիւններովը , ճանաչումն տիեզերիս՝ իր անհամար աշխարհներովը , ճանաչումն Փիզիքական օրինաց , որք մարմինները կվարեն , և վերջապէս ճանաչումն բարոյական օրինաց , որք կկառավարեն զհոգին :

Արդարեւ գիտութիւնն է որ մի առ մի տըխուր և փնասակար նախապաշարմունք ու սխալմունք կանհետացնէ :

Գիտութեան և իր կարևորութեան վրայ այս համառօտ տեսութիւնն ընելով , համոզել կուզենք մեր յարգելի ընթերցողք , թէ այս տկար գործով մէկ կողմէն գիտութեան և ճշմարտութեան առաջնորդ եղողները , միւս

առաջին հատորիկն ալ, մարդասէրն Յոանք-  
լէնի կենսագրութենէն կսկսինք :

Թէ Մատենադարանիս և թէ Թանգարա-  
նիս յաջողութիւնն, իր Գերապատիւ և Մե-  
ծապատիւ Բարերարաց և Գործակալաց պաշտ-  
պանութենէն կախումն ունենալով, Խմբա-  
գրութիւնս ոչ միայն բաւ կհամարի, հրա-  
պարակաւ իր անկեղծ շնորհակալութիւններն  
յայտնել, այլ երախտագիտական քաղցր պար-  
տաւորութիւն մը կատարած ըլլալ կյուսայ,  
Թանգարանիս մէն մի հատորը, Նոցա Միոյն  
անուան նուիրել յաջորդարար, և ընդունել  
այս առթիւ իմբադրոյն անկեղծ շնորհակա-  
լութիւններն և երախտագիտական յարգանք-  
ները :

ՏՕՔԹՕՐ Մ. Բ. ԻԵԹԻԻՃԵԱՆ

1884 Յունվար .

Կ. Պօլիս

կողմանէ և միանգամայն պիտի սոզրեցնենք .  
Թէ առանց գիտութեան ոչ հանգիստ, ոչ  
առողջ և ոչ բարեկեցիկ կեանք կարելի է :

Ուստի մէկ կողմէն պիտի աշխատինք, թէ  
ո՞րոնք եղած են գիտութեան յառաջադի-  
մութեան աշխատողներն, որք պիտի կազ-  
մեն, Թանգարանիս հատորիկներն, ինչպէս  
որ կաշխատինք երկու տարիէ ի վեր, թէ ի՞նչ  
գիտութիւններով մարդս կրնայ ըլլալ հան-  
գիստ, առողջ և բարեկեցիկ, որք կկազ-  
մեն Մատենադարանիս հատորիկներն :

Ինչպէս որ սկսանք, ըսելով թէ երկրա-  
գընտիս 1,200,000,000 բնակիչները կազմող  
աղգաց մէջ ամենէն հարուստն, ամենէն գի-  
տունն և միանգամայն ամենէն բարեկեցիկ  
ազգն է Ամերիկացի ազգն, ուր գիտութիւնն,  
իր ամեն ճիւղերովն յառաջ գացած է, ուր  
այս դիտմամբ աշխատողաց, մարդկութեան  
բարերար եղողներուն առաջինն եղած է,  
Պէնթամէն Յոանքլէն. ուստի Թանգարանիս

Պ Է Ն Ժ Ա Մ Է Ն

## Ֆ Ռ Ա Ն Ք Լ Է Ն

1706 թուականին յունվար ամսոյն 17 ինչ  
այսինքն 1772 տարի առաջ . Պօսթօն (քաղաք  
Ամերիկոյ) բնակող ժողիս անուն գործաւորն  
ունեցաւ իր տասնևհինգերորդ զաւակը : Ժո-  
զիս հակառակ իր աղքատութեան , ուղիղ  
սրտով և բարեպաշտութեամբ օրհնեց Նա-  
խարհնամութիւնն իր բնտօնեաց թիւն ա-  
ւելցնելու , իսկ մարդկութիւնն ալ շնորհա-  
ւորելու առիթ ունեցաւ , զի այս նորածինն  
էր Պէնժամէն Ֆռանքլէն , արդարև ամբողջ  
մարդկութեան , ամեն սոցաաց և ժողովրդոց  
բարերարն եղող այս մեծ մարդն , որոյ ա-  
նունն յաճախ յիշած ենք մեր գործոց մէջ (1) :

---

(1) Տե՛ս Մ-ր . Ժ-դ . Նշ-ն Ա . Թ-ի - 7 :

Պէնժամէն Ֆաանքլէնի , Ամերիկան հարւ-  
տացնողին , Աշխարհիս տնտեսագէտին հայրն  
եղող Ժօզիա Ֆաանքլէն , ջերմ երէցական  
Անգղիացի մ'էր , որ իր հայրենիքը թողու-  
ստիպուեցաւ իր խղճին ազատութիւնն սուղ-  
հոգեւու համար : Ժօզիա՝ իր Պէնժամէն տղուն  
տարօրինակ կանխահասութիւնը նշմարելով ,  
խորհեցաւ զանի երէցական կրօնի աշակերտել  
և որոյ համար սոյն նպատակաւ զանի դաս-  
տիարակել տալ որոշեց : Դժբաղդաբար ըն-  
տանիքը բազմութիւ , եկամուտն ալ խիստ քիչ  
ըլլալուն համար , ահամայ ստիպուեցաւ իւր  
զուկները ժամանակէն առաջ դպրոցէն հա-  
նել և աշխատցնել :

Խեղճ Պէնժամէն հազիւ տասը տարեկան ,  
պարտաւորեցաւ դպրոցը թողելով , հօրը հետ  
աշխատիլ և ճրագի պատրոյգ (Ֆէթի) կտրել ,  
այսու ամենայնիւ ինքզինքն ինքիրեն դաս-  
տիարակելու միջոց ալ գտաւ . ինչպէս մէկ  
կողմէն եթէ մեքենայաբար սխարոյգ կկտրէր  
և կաղսպարներու մէջ ճրագուն (եւ եւաը)  
կթափէր , միւս կողմանէ Պէնժամէն մեծն  
Ֆաանքլէնի երևակայութիւնը ծովուն եզերքը

կթափառէր ծովի սիրահարեալ ըլլալուն :

Ֆաանքլէն , այս մեծ տնտեսագէտը , նա-  
ւաստի ըլլալու մեծ ճաշակ ունէր , այսու ա-  
մենայնիւ իր հայրը դստովեց : Է՛ն ուրեմն ,  
ըսաւ ինքնիրեն , որովհետեւ նաւաստի չեմ  
կարող ըլլալ , ճրագ թափող ալ չպիտի ըլլամ ,  
ուստի հրաման կընդունի կտրոցարարի քով  
աշակերտ մտնել :

Բնականէն ծովը շատ սիրելուն , և գտնու-  
ած տեղն ալ ծովուն խիստ մօտ ըլլալուն ,  
յարմար պարագայից մէջ կերթար իր ճաշակն  
յագեցնելու : Շատ անգամ ջրին մէջ կամ ջրին  
վրայ էր , լողալով կամ փոքր մակոյկով մը ծո-  
վին վրայ իր ընկերները պտըտցնելով , ուր  
միշտ իբր նաւագետ նկատուած էր :

Ամեն յարմար պարագայի մէջ կըսէր , ըն-  
կերացս առաջնորդն էի , բայց շատ անգամ  
ալ զսնունք վտանգներու և նեղութեանց կա-  
ռաջնորդէի : Ինչպէս է հետեւեալ օրինակը ,  
զոր դիտմամբ յառաջ կրերեմ և միանգամայն  
կապացուցանէ , թէ Ֆաանքլէն հասարակաց  
օգտին ծառայող գաղափարներու հակում մը  
ունէր : Լճակի մը քով աղի խրամ մը (Բոուլսֆ)

կգտնուէր, որոյ վրայ ջրադաց մը շինուած էր. ուր շատ անգամ ի բարձրանալ ջուրոց ձուկ բռնել կերթայինք կըսէ Ֆռանքէն, կոխկռտելէն տղմուտ վայր մը դարձուցինք, ուր կայնելու մեծ նեղութիւն կը աշխինք: Ուստի քարայտակ ճանապարհ մը շինելու առաջարկութիւն մը քրի, որոյ վրայ հաստատութեամբ կարող պիտի ըլլայինք կենալ, և մեր այս նպատակին հասնելու համար, քիչ մը անդին տան մը շինութեան համար դիզուած քարի կոյտ մը կցուցնէի ընկերներուս: Երեկոյին գործաւորաց երթալէն յետոյ, ընկերներուս մեծ մասը հաւաքելով, միջոց աշխուժութեամբ սկսանք գործի, այնպէս որ քիչ միջոցի մէջ բոլոր քարերը կրեցինք մեր փոքր քարայտակը շինելու: Այսու ամենայնիւ հարց և փորձ եղաւ այս յափշտակութեան կամ գողութեան վրայ, ամբաստանուեցանք, յանցաւոր դատուեցանք և սլատժուեցանք, Երաւ է որ շատ աշխատեցայ ըրածիս օգտակարութիւնը հաստատելու, այսու ամենայնիւ միւս կողմանէ հայրս կարող եղաւ համոզել զիս, թէ, «Ինչ որ պիտի տեսնուի, ինչ որ ճշմարտի-

տեսնուի ըլլալ: Այս խնամուն խօսքը սաստիկ յանդիմանութիւններէն աւելի գորաւոր և զգալի եղաւ, այնպէս տպաւորուեցաւ երիտասարդ ին սրտին մէջ, որ տպագային համար մեծ արդիւնքներ ունեցաւ:

Արշափ տղաքներ, իրենք իրենց կամաց ու քմաց ազատ թողալով շրնթէ առանց իրժրըժանաց, ամենայն ազատութեան մէջ ազրելով, բոլորովին դատարկաշրջիկ կըլլան իրենց բնագոյումներու յիմար և սխալ անկախութեան հնազանդելով: Ընդհակառակը, մարդկութեան բարերարն եղող Պէնեօմէն Ֆռանքէն, իր պարտաւ ժամերէն օգուտ կը քաղէր կրօնը սովորելու:

Այսօր, որ գիրքերն առատ են, բայց առսանուք պէտք եղած յարգանքը չունին այն գանձերուն, որոնք երբեմն այնքան հազուագիւտ էին, մտնաւանդ նոր Քաղաքի մը համար, ուր ամեն բան Անգղիայէ պիտի գար: Ֆռանքէն ուղածին չափ գիրքեր ունենալու միջոցը գտաւ, տպագրիչ եղող եղբորը քով իբրև գրաչար մտնելով, ուրիշ աւելի կշտամբակոն մերժումներ կընդունէր քան թէ չափ:

Ինչ փոյթ , Ֆուանքլէնի ուզածն էր գիրքելր ,  
 և ոչ թէ փաղաքշանք . զի գտած եղաւ ինք-  
 զինքը դաստիարակելու ծարաւն յագեցնող  
 միջոցն որ զինքը կլափէր : «Օրական շես վճա-  
 րեր , ըսաւ օր մը իր եղբօրը . շատ բարի ,  
 բայց զիս կկերակրես , տուր ինձ ինչ որ պէտք  
 է սննդեանս համար , մնացորդն ես կհոգամ» :  
 Եւ ահա Ֆուանքլէն 16 տարեկան երիտասար-  
 դըն , որ աշխարհիս ամենէն երևելի և մեծ  
 տնտեսագէտն եղաւ , առոյգ իմացականու-  
 թեան մը տէր ըլլալու համար , որոշեց տնտե-  
 սութեան համար միս չուտելի վնաս իր մարմ-  
 նոյն առողջութեան , և մտի տալիք ստակը  
 գիրքերու տուաւ : Այս դրութիւնը , միջոցն ,  
 իրեն շատ աղէկ գալով , յարատեւեց այս-  
 պէս . այսու ամենայնիւ արգելք չունեցաւ  
 խոր ծերութեան հասնիլ , առոյգ ըլլալով իր  
 ամեն կարողութիւններով :

1721ին իր եղբայրը լրագիր մը հրատարա-  
 կել սկսաւ , այսինքն 182 տարի առաջ , որ  
 ատեն Ֆուանքլէն փառասէր խորհուրդ մը  
 ծնաւ , սոյն լրագրոյն խմբագիրներէն մին  
 ըլլաւ : Բայց ինչպէս ընէր այս խորհուրդն

երևան հանել , որով անշուշտ ինքզինքն այպա-  
 նել էր : Ուստի իր առաջին յօդուածը կեղծ  
 գիրով գրելով և ուրիշ անուն մը ստորագրե-  
 լով , երեկոյին տպարանին դռնէն ներս նետեց :

Ինչ աստիճան սիրաը կզարնէր , և ինչ  
 ուրախութիւն , երբ տեսաւ թէ խմբագրու-  
 թեան մասնաժողովը սոյն յօդուածն իբրեւ  
 յարմար , օգտակար դատելով հրատարակեց ,  
 ինչպէս և ուրիշներ ալ յաջորդաբար : Այս յա-  
 ջողութիւնը զանի հպարտացուց , հազիւ 18  
 տարեկան էր , որ ատեն բաւական վարժուե-  
 ցաւ արձակ գրել : Բայց փոխանակ գովեստ-  
 ներու որ իբրեւ զրազիր կցանկար , ծանր  
 յանդիմանութիւններ և սաստիկ կշտամբանք-  
 ներ ընդունեցաւ : Հայրն յայտնեց թէ բոլոր  
 խմբագիրներն ալ անօթի կմեռնին , և ինչ-  
 պէս իր եղբայրն ալ այնքան դժուարացուց  
 խեղճին վիճակն , որ վերջապէս փախչիլ ու-  
 րոշեց : (Այս էր ահա 200 տարի առաջ գրա-  
 գիտաց , խմբագրաց վիճակն յՍմերիկա , ինչ-  
 պէս այսօր մեր մէջ , զի ցաւօք սրտի կտես-  
 նենք , թէ խմբագիրք գրեթէ կմուրան . . . :  
 բացառութիւնը կյարգենք ) :



Նախ և առաջ նիւ—տօրք, յետոյ Ֆիլա—  
տելֆիա ուղեւորեցաւ, և վերջապէս, յար—  
մար և յաջող պարագայ մը գտնելով, Անդ—  
ղիա գնաց, Այ աշակերտելու կեանքը լրա—  
ցած էր :

Աշխատասէր, խելացի, իր օրականովը բա—  
ւական հանգստութեամբ և պարկեշտու—  
թեամբ ապրող ընտիր գործաւոր մ'եղաւ, և  
մանաւանդ ամեն օրուան շահածէն մաս մը  
պատու ստփրութիւն ունեցաւ, թէ գէշ,  
ձախորդ և աշխատելու անկարող կամ հի—  
ւանդ եղած օրերու, կամ թէ աւելի հան—  
գիստ օրեր անցունելու համար հօրտաա—  
նալու մտօք :

Ինչ որ ալ ըլլայ. Անդղիոյ մէջ չյաջողե—  
լուն, Ամերիկայ վերադարեցաւ, ուր իր յար—  
գանաց և սիրոյն արժանի կ'ընջ մը հետ  
ամուսնացաւ :

Շատ նեղութիւններէ, բախտի շատ մը յան—  
կարծազէպ փոփոխութիւններէ յետոյ 'ի շը—  
նորհս անտեսութեան և խնայողութեան,  
Ֆրանքլէն կարող եղաւ փոքրիկ գրամագլխի  
մը տէր ըլլալ, որով յաջողեցաւ Ֆիլատելֆի-

այի (քաղաք Ամերիկոյ) մէջ տպարան մը հաս—  
տատել: Գիր և մամուլ Լոնտրայէն բերել  
տուաւ, իրեն պէտք եղած թուղթն ալ ինքը  
չինելով լրագիր մը հաստատեց, Արդեօք այս  
ըրածը շահադիտութիւն մ'է, ոչ, գի Ֆրանք—  
լէն աւելի ազէկուսիւն ընել կ'մտածէր, քան  
թէ հարստութիւն գիլըն, ինչպէս որ բոլոր  
իր կեանքն անցուց պատուով ապրելով. քան  
թէ մեծ անուններ և տիտղոսներ ունենալ  
կ'իմասէր: Իր լրագրոյն պարունակութիւնն  
էր գիտական ճշմարտութիւնները սամկացնել  
և բարոյականութեան սկզբունքները տարա—  
ծել :

Արթեալ անձերէ բազկացեալ ընկերութիւն  
մը հաստատեց, որք պարտաւորեալ էին  
գիտացածնին մէկգմէկու հազորդիւ: Այս ըն—  
կերութեան մէջ, իբրև Աքալմիա, ոչ թէ  
ճարտարախօսական յաջողութիւններ փնտռել  
պէտք էր, այլ փոխադարձ դպրոց մը, ուր  
յօգուտ ամեն ընկերաց պաղափարաց ազատ  
փոխանակութիւն մը ընելու համար հիմնադ—  
րեց:

Այս ընկերութիւնը 40 տարի յարատեւելու

յաջողութիւնն ունեցաւ, անկէ ի վեր օրինակ եղաւ Անգղիոյ և Ամերիկոյ մէջ բազմութիւ գիտական ընկերութեանց հաստատման: Այս ընկերութիւնը թանգարան մը հաստատեց բաժանորդագրութեամբ: Այսպիսի հիմնադրութեան մը գողափարը տարածողին մեծարանք տալու համար է, որ Նաղղիոյ մէջ հասարակաց թանգարաններն ընդ հանրացնող ընկերութիւնը Ֆրանքլինի անուան պաշտօտանութեան տակ դրուած է:

Մինչև այն օրը Ֆրանքլին, առանց ասպնորդի և խճճածանքի, իր պարկեշտութեան և առաքինութեան ընազդումներէն ներշնչեալ ապրեցաւ: Ապրելու այնպիսի ընթացք մը բռնել ուզեց, որով կարող եղաւ թէ ազէկ և թէ երկայն ապրելու միջոցներ ունենալ: Այսու ամենայնիւ պէտք է խոստովանիլ թէ ասով անձնասիրութեան և բարոյականութեան մէջ միարանութիւն մը հիմնուած եղաւ: Տասն երեք հիմնական առաքինութիւններ որոշեց իրեն համար, հետևեալ դասակարգութեամբ. Բարեխառնութիւն, լսութիւնէն հարձ, հասարակաստութիւն, արհեստութիւն, աշ-

խառնութիւն, անկէղծութիւն, արդարութիւն, զափառսութիւն: Ժայռութիւն, հանրարարութիւն, պարկեշտութիւն և խնարհութիւն:

Ամենէն նախապատիւ համարածն էր բարեխառնութիւնն, որովհետև այս առաքինութիւնը մարդուս միաքը միշտ արթուն պահելու կնպաստէ, Ֆրանքլինի համար, սկիզբն իմաստութեան էր: Ոնքն ալ խիտ ժուժկալ էր, ինչպէս կապացուցանէ հետևեալն:

Իր լրագրոյն բաժանորդներէն մին, երբ օր մը կապառնար իր բաժանորդագրութիւնը զաղբեցնել, եթէ իր քաղաքական կարծիքները չփոխէ. — Շատ ազէկ, պատասխանեց, կզաղբեցնեմ Ձեզ լրագիր խաւրել, զի անկարելի է ինձ սկզբունքս փոխել: (Ազգ. շահահմար իրենց լրագրը, Բրքնէրնայ լրագրագրաց . . .):

Մէկ քանի ամիս անցնելէն յետոյ, այն բաժանորդն ընթրելու կհրամցնէ: Հրաւիրեալը փոքրիկ սեղանատուն մը առաջնորդուեցաւ, որոյ ամենէն մեծ զարդարանքն էր ժայռութիւնը: Սեղանին շրջուցից ձերմակութեամբ ծածկողին վրայ կգտնուէին վարունգ,

կարագ , պանիր , աղցան , երած պրաս , չիշ մը ջուր և աման մը գարեջուր . ասոնցմէ զատ ուրիշ ուտելիք ու խմելիք բան մը չըկար :

Սեղանին շուրջը բազմեցան , իր գիտութեամբն անուանի բժիշկ մը , Ամերիկայ Սահմանադրութեան խմբագիրներէն մին և վերջապէս հուշակաւոր Վաշինկթօն , որոնց ամենն ալ Ֆրանքլինի սերտ բարեկամներն էին : Եթէ քիչ կերան , ընդհակառակն ասոր փոխարէն երկար ատեն խօսակցեցան , և այնպիսի յանկուցիչ կերպիւ , որ կոչնականք կէս գիշերն անցնելէ յետոյ իրարմէ բաժնուեցան : Իրարմէ բաժնուելու ատեն , հետո բաժանորդը Ֆրանքլինի մօտենալով յուզմամբ ըսաւ , շնորհակալ եմ , այս անցուցած գիշերուանս և մանաւանդ ընդունած դասին համար : Մտք մը , որ կարող է իր երկրէն « մենէն հուշակաւոր » անշխարհ հրաշքի վարձիք և պրաս ոտելու , անարարկոյ պարկեշտ և անկեղծ քաղաքակրթութեան մը մեջն կրնայ ունենալ :

Ֆրանքլին չէր կարող տանիլ սնտախ և զատարկ ատենախօսութիւնները . շատ մը

իմաստնոց հետ համակարծիք էր , որ եթէ քօնքոն արժան է , լսութիւնն ալ պիտի :

Այս առթիւ յարմար կղատեմ , Ֆրանքլինի կենաց մէկ զիպուածն յառաջ բերել , որ կապացուցանէ թէ ամեն խելացի մարդիկ կըրնան ունենալ անհեղեղութիւններ և իմաստութեան սահմաններէն դուրս ելնել : Ֆրանքլին իբրեւ դեսպան Գաղղիա խրկուած ատեն , Փարիզ գացած օրը , Եսպեո կիջնէ , ուր կրնակէր հուշակաւորն Պայեի : Ասի , առանց ժամանակ անցնելու , այցելութիւն մը տալ պարտք համարեց այն հուշակաւոր Հիւրին , որ իր ներկայութեամբը , քաղաքը կը պատուէր , իմաց կուտայ գալուստը . Ֆրանքլին , որ զանի ի համբաւէ կճանաչէր , ամենայն սիրով կընդունէր : Պայեի , Ամերիկացի Փիլիսոփային քով կնստի և զիտմամբ կըլէ : Կէս ժամ կանցնի և Ֆրանքլին դեռ բերանը չբանար : Պայեի ընչատուով հանելով իր դրացիին կներկայացնէ առանց բառ արտասանելու . ասի ալ ձեռքի նշանով կյայտնէ թէ սովորութիւն չունի : Այս համար տեսակցութիւնն ամմօղջ մէկ ժամ կտնէ : Վերջապէս Պայեի ոտ

քի կելնէ և Ֆռանքլէն , լուել գիացող Գաղղի-  
ացի մը գտնելուն վրայ բարկացած , ձեռ-  
քը կերկնցնէ և ամենայն սիրով սեղմելով կը  
գոչէ , շոք լաւ . Պ . Պայեի , շոք լաւ : Այս  
կէտիս մէջ առանց չողոքորդութիւն մը ըրած  
ըլլալու կրնանք ըսել իրաւամբ թէ Ա-  
մերիկացին եղած է առաջինը լուութիւնը  
չպահողը :

Ֆռանքլէն վայրկեան մը չէր կորսնցնէր ,  
զի ինչպէս որ սովորութիւն ըրած էր ըսել ,  
թէ անօթնաթիւնն աշխարհէր մարդուն դո՛ւր  
կնայի , բայց զհամարյակէր ներս մտնել :

Ահա սիրելի ընթերցող , ուր որ ալ ես ,  
թէ ի Պօլիս , ի Գաւառս , յԵւրոպայ , ի Ռու-  
սաստան , ի Հնդկաստան և յԱմերիկայ , եթէ  
զաւկի տէր ես , յաճախ կարգացնել տուր ,  
Ֆռանքլէնի այս համառօտ վարքը զաւկներուդ ,  
եթէ ուսանող ես . գէթ ամիսն անգամ մի  
կարդայ . և պատմէ զայս չկարդացող ընկե-  
րիդ (զի անշուշտ չկարդացողն , անհամար է  
և խիստհազուագիւտ՝ կարդացողը Բաւական  
է որ Ֆռանքլէն անուեն ամեն ոք սովրի . ո-  
րով սովրած և ընտանի եղած կըլլայ , ՏՆՏԵ-

ՍՈՒԹԻԻՆ ԲՈՒԽԻՆ . քսան փարայ միայն վը-  
ճարելով Ֆռանքլէն և Տնտեսութիւն սովրիլ ,  
էհ , գուցէ , եթէ ոչ շատերուն , գէթ մէկ  
քանիներու հարստութեան առիթ ըլլայ . այս  
ալ բաւ է ինձ և մեծ մխիթարութիւն :

Ֆռանքլէնի վրայ մինչև ցարդ խօսածներէս  
կրնայ ամեն ոք սովրիլ , թէ մինչև այս աս-  
րիբին մէջ , եղած է ճշտ շնոր ու թափող ,  
կտրոցագործ , գրաշար , գրագիր , յետոյ ,  
տպարանի գործաւոր , լրագրագետ , ընկե-  
րութիւն հիմնադրող , թանգարան հաստատող :  
Իսկ օր մ'ալ պիտի տեսնենք , զիտնական ,  
քաղաքագէտ և իր երկրին ազատութեան  
դրդիչն ու գրգռիչն :

Ստախօսութեան դէմ այնպիսի ատելու-  
թիւն , հակառակութիւն ունէր , որ մինչև  
քաղաքական պաշտօններուն մէջ անկեղծու-  
թեամբ կվարուէր . հազուագիւտ բան , որով  
այսու բնաւ չմտառուեցաւ : Երբ Գաղղիա ե-  
կաւ , Լազուիկիոս ՓՊ . ի հետ դաշնա-  
դրութիւն ընելու , Անգղիոյ կառավարութիւ-  
նը գաղտնաբար զինքը հրապարակ տալ փոր-  
ձեց բարեկամներով , որք իրեն ապահովու-

թիւն կուտային , Անգղիոյ և ներկացնող  
 գաղթականութեան մէջ հաշտութեան մը  
 կարելիութիւնը : Պարզապէս կ'պատասխանէ ,  
 թէ Գաղղիոյ հետ խօսողացած էմ , Գաղղիոյ հետ  
 կ'սեմ . . : Եւ հետեւաբար Գաղղիական դաշ-  
 նագրութիւնն ստորագրեց :

ՄԱՔՐՈՒԹԻՒՆՆ իրրև առաքինութիւն ընտ-  
 րեց յառաջ բերելով թէ անբար խնդ մը , մա-  
 րաբ արմոյ մը մէջ միայն կընայ բնակիչ կամ գործ-  
 ւիչ : 84 տարեկան եղած ատեն , որ մեռնիլը  
 կգուշակէր , աղջիկը կանչելով , ամենայն  
 հանգարտութեամբ կըսէ , աղջիկ , յետեւ  
 անկողինդ պարտադէր , սրտդ զի մտքս-  
 թեան մէջ մեռնիմ :

Ֆռանքլէնի համար կ'պատմուի թէ հեքն-  
 թեան և հրմայել հեղեղ . արդարև , այս պակ-  
 սութիւններն ուղղիւ որոշեց , որոց երկուքն  
 ալ , բարեկամութեան հրապոյրքն ու խօսակ-  
 ցութեան համը կ'առնուն : կ'ծու բառեր ,  
 սիրտ ծակող կատակներ , հակառակախօսու-  
 թիւններ և սնուպարծութիւն յայտնող խօ-  
 սակցութիւններ ընել որոշեց : Ինչպէս , փո-  
 խանակ , անընդար , հարկաւ , անպարտա-  
 քար , ան-

արախոյս , ևն , ըսելու , կըսէր կ'հոշակէմ , կը  
 մարտէմ , կ'կողմնէմ , ինչ կերևէ և այլն , և տեսու-  
 թէ այս եղանակաւ ամենայն ուշադրու-  
 թեամբ մտիկ ընողներ կ'ունենայ :

Պէտք չէ կարծել թէ այս իմաստունը տը-  
 խուր և վէս էր : Ընդհակառակը , թէ խօսքով  
 և թէ գրիւ յայտնածն , իր ամեն խորհածն  
 այնպիսի զուարճալի և ճիշդ էր , որնոր իր  
 հոգւոյն կատարեալ հանդարտութենէն կու-  
 զար :

Իրրև Բիթակոր , Ֆռանքլէնի կ'սորհէր թէ  
 խղճի ամենօրեայ քննութիւն մը , բարեգոր-  
 ծութիւն ընող մարդուն կարևոր էր : Առանց  
 ինքզինքին հարցնելու չէր պատկէր , թէ ինչ  
 աղիւս-թիւն ըրի այսօր :

« Անկեղծութեամբ կ'խոստովանէր , թէ  
 երևի-յո՞՞՞տե՞ս աւելի պակասութեանց մէջ գործու-  
 լուս ինչ շարժացայ , բայց այսու մեռնիլն շոց  
 շուշու՞մը քեանիւս գահանակութիւնն ա , անե-  
 ցայ » :

Ահա այս եղանակն է համառօտիւ , զոր  
 Ֆռանքլէն գործածեց իր բարոյականութեան  
 կանոններուն հետադանդելու : Եթէ Ֆռանքե-

լէն , իր ժամանակին իրաց , անցից և մար-  
դոց վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ , այն  
է պատճառը . թէ առանց պահանջելու ու-  
րիշները կառավարելու , ինքզինքը կառավա-  
րել սրտած էր :

Այն պարտականութիւնները , զորս կա-  
տարել հարկ համարած էր , կուզէր որ ու-  
րիշներն ալ գանոնք ընդունին : Իր լրագիրն ,  
որ իրեն կօզնէր իմաստուն քաղաքականու-  
թեան մը ներշնչող գաղափարներն և գոր-  
ծողութիւններն ու միանգամայն գիտութեան  
գիւտերը տարածել , ըստ իւր , բաւական չե-  
րեցաւ բարեգործութեան սկզբանց , օրինաց  
ու կանոնից տարածման և ընդհանրանալուն ,  
որոյ համար սոյն սկզբունքն աւելի ընդ-  
հանրացնելու և ախեղերական ընելու համար  
ԳԻՏՈՒԹԻԻՆ պարզօրէն Ռիչար անուն օրա-  
ցոյց մը հրատարակեց որ ախեղերահաշակ է  
թէ Հին և Նոր աշխարհի մէջ :

Ֆուանքլէնի այս հռչակաւոր օրացոյցն ընդ-  
հանրացուց Ամերիկոյ մէջ , գործնական և  
քարոյական փիլիսոփայութիւն մը , որոյ պա-  
րունակութիւնն էր իմաստութեան վերա-

բերեալ խրատներ : Սրդարև բազմաթիւ իը-  
րատներու , առածներու , ընտիր ասացուած-  
ներու հաւաքածոյ մ'էր որոնցմով շատերն  
օգտուեցան : Ստոյգ է թէ Ֆուանքլէն եթէ  
այս գործէն զատ ուրիշ գործ ունեցած չըլ-  
լար , դարձեալ արժանի էր մարդոց երախ-  
տագիտութեան , և իր մեծ անուան սնմա-  
հութեանը :

Ֆուանքլէն , անկախ ազատութեան վիճա-  
կի տէր և միանգամայն հաստատամիտ կամաց  
տէր ալ ըլլալով , առևտրական զբաղմունքնե-  
րը թողլով , միմիայն քաղաքականութեան և  
գիտութեան վերաբերեալ գործերով զբաղիլ  
սկսաւ : Ուստի շատ մը գիտնականներ ժող-  
վելով նոցա յառաջադիմութեան խոչընդոտ  
և կենսական տարրն եղող , պէտք եղած զը-  
րամական օգնութիւնը հայթայթելու ձեռ-  
նարկեց :

1746ին , Լէյտ քաղաքի մէջ (Հօլլանտայի  
հռչակաւոր քաղաքն է) , Միւսչէնպօք հըռ-  
չակաւոր դասատուն գէշ հաղորդող ամանի  
մը մէջ առանձնացեալ ջրոյ ելեքտրական զօ-  
րութիւն կուտար : Ելեքտրական մեքենայն և

Ջուրն իրարու հետ հաղորդակցութիւն ընող շղթայն հանելու ատեն , ձեռաց և կուրծքին մէջ այնպիսի ցնցում մը զգաց , ուսկից յետոյ կրկին անգամ այնպիսի փորձ մը ընել չուզէց :

Ասոր վրայ , պոփեյ Կլեյ (չիչ Լէյտի) անուն ֆիզիզական գործիքին զիւտն եղաւ , որոյ մէջ կգորանայ , կտողովի ելեքտրական գործիքէն առնուած ելեքտրականութիւնը : Ֆիզիզի վրայ տեղեկութիւն ունեցողները գիտեն անշուշտ , թէ այն գիւտին վրայ , ամեն կողմ Լէյտի շիշերը տարածուեցան , և փորձուեցան :

Նույն երէց , երեք հարիւր զինւորներու վրայ փորձեր ըրաւ , որոնցմէ մին , միայն շղթայն բռնելով միւս երկու հարիւր իննուսուն և ինը զինւորներն ալ ելեքտրական ցնցումն ունեցան առանց որ և է վտանգի :

Այսպիսի փորձերով է որ նոյն միջոցին գիտնական դասին մէջ մեծ հետաքրքրութիւն մը և ճշմարիտ յուզմունք մը ծնան , բազմաթիւ և ամեն կերպ վարդապետութեանց նիւթ և առարկայ եղան : Իսկ Ֆուանքլէն ե-

ղաւ այս խնդիրը լուծող : Ելեքտրականութեան վրայ այնպիսի հաստատութեամբ եւ յարատուութեամբ աշխատեցաւ , որոնցմով մեծ յաջողութիւն ունեցաւ և իր ամեն գործոցը մէջ :

Ելեքտրական լուսին և կայծակին մէջ եղած նմանութիւնները հաստատեց , և հետեւցուց թէ փոթորիկներու ատեն տեանուած երևոյթք ելեքտրական մեքենայիւք ծնունդ առած երևոյթից նման են , որոյ առթիւ ըսած է Ֆուանքլէն , թէ բնութեան յետոյ յիշեալ եղած կայծակը , ֆիզիքականներու յետոյ յիշեալ էլեքտրականութեան է :

Բայց այս մեծ ճշմարտութիւնը չհուշակած կուզէ զանի փորձով յայտնել : Ելեքտրականութիւնն , ուզածին պէս գործածելու առաջնորդելու և պէտք եղած ատեն նորա գորութիւնն ոչնչացնելու գաղափարը ծնաւ . զի կըսէր , երբ պատճառներն և արդիւնքները կճանչցուի , ինչո՞ւ համար դարմանը չպիտի գտնուի , բայց ինչպէս կայծակն ամպերէն վար իջեցնել , զանի խիստ մօտէն քննելու : Հնազանդութեան այն աստիճան անկարգ եղող

գորութիւն մը ինչպէս նուաճել : Ինչպէս որ ըրաւ զանի թուուցիկով մը :

1752 Յունիս 22 ին , փոթորիկ եղած ատեն Ֆռանքլէն Ֆիլատէլֆիայէն դուրս կ'ելլէ , իր հետն առնելով իր փաքրիկ տղան , որոյ ուսին վրայ թուուցիկ մը բեռցած էր : Ասի տղայական խաղ մը չէր . բայց Ֆռանքլէն , մարդոց իմաստունն ըլլալով , կվախնար այնքան յոգնութիւններէն յետոյ ունենալիք անյաջողութենէն : Ինքզինքը կզահէր , եւ դաղտնի կաշխատէր , կարծես թէ բարեգործութիւն ընելու կամաչէր :

Թուուցիկն , որոյ ծայրը մետաղէ սլաք մը կը գտնուէր , օգը բարձրացուց : Ֆռանքլէնի տղան այս վտանգաւոր գործիքը կբռնէր :

Նոյն միջոցին կայծակը կորոտար , Ֆռանքլէն , անձրևէն թրջած լարին մօտեցնելով իր մատը լոյս կցատկէ : Գլխէն մինչև ոտըը սոսկալի արձակում մը զանի կցնցէ . ուրախութենէն կդողայ . ինչ էր , ամոլին այս կայծակն , անշուշտ ելեքտրականութիւնն , որոյ վրայ ինքնալ պօռաց , թէ գոռոյ :

Ասոր վրայ , խորհեցաւ և հետևութիւն

գտաւ թէ կարելի պիտի ըլլայ , կայծակաւոր ամպերն անյլաս հանդիսացնել , իրենց ելեքտրականութիւնն իրենցմէ թաքուցանելով : Ասի ի գործ դնելու համար , պէտք ունեցաւ ելեքտրական թուուցիկը , տղայական այն խաղալիքը , հաստատ գործիքով մը փոխանակել , միևնոյն նպատակի ծառայելու համար :

Որովհետև կըսէր Ֆռանքլէն կայծակն ամենէն բարձր բաները կզարնէր , թէ մեքենայից ելեքտրականութեան նման սլաքներէն կյանկուցանէ , որովհետև ամենէն ընտիր հաղորդող մարմինները կբնտուէ , Ֆռանքլէն կանխաւ համոզուեցաւ թէ կարող պիտի ըլլայ ամպոց ելեքտրականութիւնը հնարիւք առնուլ , դէպի յերկինս ուղղեալ սրածայր երկաթի ձողերով : Շատ կրկնեց և կատարելագործեց իր փորձերը , զոր վերստին փորձուեցան ամեն քաղաքներու գիտուններէն : Ինչպէս որ այս առթիւ , Ռուսիացի Ռիչման անուն Ֆիզիգաբանն իր կեանքը կորոյս :

Այս գիտնականին , Ս . Բեթերպուրկի իր տանը մէջ ունեցած գործարանին մէջ եր-



կաթեայ ձող մը կգտնուէր , մէկ ծայրը տանիքէն դուրս , միւս ծայրն ալ գետնէն ապակիէ ստքով մը զատուած էր : 1755 օգոստոս 6 ին , փոթորիկի ատեն , սոյն գործիքին շատ մօտը գտնուելով , կայծակնահար եղաւ մեծ պայթումով մը ճակատէն զարնուելով :

Այսպիսի աղետալի զիպուածներէ աղատ մնալու համար , ելեքարիկը վագեցնել տալու էր , ընտիր հաղորդող մարմինով մը , որն որ երկաթեայ ձողը , հողին հետ կատարեալ հաղորդակցութեան մէջ դնէ : Այս էր ահա Ֆռանքլէնի այն հրաշալի զիւտը , շանթարքէլերի<sup>1</sup> կոչուածն : Արդարեւ , սովրէ ընթերցող , թէ ասի փոքր բան մը չէ , այս զիւտը պատճառ եղաւ զՖռանքլէն մարդկութեանբարերարաց մին կոչելու :

Այս գիւտին վրայ շանթարգել երկաթք շատ կողմեր ընդհանրացան , ինչպէս ի Բան-Ջիլվանի , ի Գտղզիտ : Իրաւ է որ շատ հակառակորդներ ունեցաւ , ինչպէս էր նաև Անգլոյ թագաւորն , որ մեծ թշնամի եղաւ Ֆրանքլէնի : Բայց Անգլիացիք ինքզինքնին կայծակահար ընելու թող տուող մարդիկներ

չլլալով , բողոքեցին և վերջապէս յաջողեցան , զի թագաւորը , Գէորգ Գ. , հրաման տուաւ , սա տարբերութեամբ , թէ շանթարգել երկաթներու ծայրերը փոխանակ սուր ըլլալու , գնթածև ըլլան :

Ֆռանքլէն այս մեծ գիւտէն զատ , Ֆիլիզական ուրիշ շատ ճիւղերու վրայ փորձեց , ինչպէս լոյսի , տաքութեան , հովերու , փոթորիկներու , սիւքերու վերաբերեալ շատ մը խնդիրներու վրայ փորձեր ըրաւ :

1747 էն մինչև 1754 թուականը , Ֆռանքլէն իր գիտական հետազոտութիւնները , նամակներու ձևով հրատարակեց , զորս ամեն լեզուով թարգմանուեցան :

Այս հռչակաւոր գիտնականն իր կեանքն երկրին ծառայութեան զոհեց , մտաւ քաղաքական կենաց մէջ , առանց հպարտութեան և փառասիրութեան , այլ միայն յօգուտ հայրենեաց :

1757 թուականին , Ֆռանքլէն իր հայրենակիցներէն Լօնտրա շրջուցաւ , գաղթականացութեանց շահերն և իրաւունքները պաշտպանելու համար , զորս Անգլիական կառա-

վարութեան և ծերակոյտն ի վնաս կգործէին :

Յաճախ գնաց հոն , փափուկ պաշտօններով , զորս ամենն ալ պատուով զլուսի հանեց :

Բայց հիւսիւսային Ամերիկոյ գաղթականութեանց և Անգղիոյ մէջ պատերազմը վերջստին բորբոքելով , ստիպուեցաւ Լօնտրայէն ելլել բանտէ ազատելու համար : Երբ եկան զանի ձերբակալելու , տեղեկացան թէ վարձեալ առաքաստաւոր նաւով մը խոյս տուած էր :

Վերադարձին , դեսպանաժողովոյն մէջ Բանգրիվանիի կողմանէ երեսփոխան ընտրուեցաւ , ուր մեծ դեր ունեցաւ Միացեալ-Նահանգք կազմող Անգղիական Գաղթականութեանց Անկախութեան համար , որք եղան աշխարհիս զօրաւոր ազգաց մին , եթէ ոչ առաջինը :

1776 թուականին , Ամերիկեան երիտասարդ հասարակապետութիւնն , Անգղիոյ առջև ինքզինքը տկար տեսնելով , Ֆրանքլէն Գաղղիա խրկուեցաւ օգնութիւն և պաշտպանութիւն խնդրելու :

Լաֆայեթի , Քիւռուոյի և Ֆրանքլէնի մէջ համաձայնութիւն մը հաստատելով , Գաղղիա Ամերիկոյ հետ ամենատերտ կերպիւ կապուեցաւ , ինչպէս որ ուզողը կրնայ սովորիլ և տեղեկանալ պատմութեամբ . թէ ի՞նչ պատուով Գաղղիական բանակը սոյն նոր դաշնակցաց անկախութիւնը կ'պաշտպանէին :

Ֆրանքլէն իբր ճարպիկ միջնորդ , ուղիղ քաղաքագէտ , ուրիշներն իր անկեղծութեան օրինակաւն առ ինքն յափշտակելով , իր խորագիտութեամբը , դեսպանագիտական դերեր խաղալով , մարդկութեան և խաղաղութեան սիրով հոգևորեալ , 1783 թուականին , յաջողեցաւ Գաղղիա , Սպանիա և Անգղիա երեք տէրութեանց դաշնադրութիւն մը ստորագրել տալ , որոյ մէջ Միացեալ-Նահանգաց անկախութիւնն ընդունելով ճանչցուեցաւ :

Ֆրանքլէն , իր համբաւովը Գաղղիոյ մէջ սիրուած ըլլալով , բոլոր ժողովրդեան կողմանէ սիրով և համակրութեամբ ընդունուեցաւ : Այս պատուաւոր , յարգելի և համակրական ընդունելութիւնը կապացուցանէ թէ

ճշմարիտ մեծութիւնը պարծանօք չյայտնը-  
ւիր :

Հագուստն ալ պարկեշտ և պարզ էր . ինչ-  
պէս կ'պատմէ տիկին Քամբան թէ ,

«Ֆռանքլէն սլալատը ներկայացաւ , Ամե-  
րիկացի երկրագործի մը զգեստով . իր տա-  
փակ մազերն շառանց փոշիի , կլսր զլիարիւր ,  
մութ գոյնով ասուէ Հագուստը , Վերայլցի-  
ներուն , իւզոտ և փոշիոտ մազերուն համար  
բոլորովին կայլակերպէին :

Այս նորութիւնը Գաղղիացի կանանց բո-  
լոր տաք գլուխները սիրով վառեց . մեծ  
խնճոյքներ տուին Ֆռանքլէնի , սրոնց մէկին  
ներկայ գտնուեցաւ , ուր գտնուող երեք  
հարիւր կանանց ամենէն գեղեցիկն ընտրուե-  
ցաւ , ամերիկացի ծերունի Փիլիսոփային ճեր-  
մակ մազերուն վրայ դափնեայ պսակ մը  
դնելու , ծերունիին երկու սյտերը համբու-  
րելով : »

Ֆռանքլէն ամբողջ ինը տարի Գաղղիա մը-  
նաց իրրև սլաշտօնեայ Միացեալ—Նահանգաց  
հասարակապետութեան , Բասիի (զիւզ Փա-  
րիզէն մէկ ժամ հեռի) մէջ կ'ապրէր 70 տա-

րեկան ամենայն պարզութեամբ , պարկեշ-  
տութեամբ և դործունէութեամբ կանցնէր  
իւր ժամանակը : Պայեի , Քօնտօրսէ և Թիո-  
կօ փիլիսոփաներուն հետ մտերիմ էր . ամեն  
ուրեք և ամենուն հետ բարեսէր , քաղցր և  
մարդասէր էր : Փարիզի մէջ արհեստից և  
արուեստից ընկերութիւն մը հաստատեց , ու-  
րոյ նախագահ ընտրուեցաւ հռչակաւոր Լա-  
վուազիէի տեղեկագրոյն վրայ :

Ֆռանքլէն , Բասի քաշուած , բազմաթիւ  
գործեր գրեց , որք ճարտարագործութիւններ  
նկատուած են :

1778ին , Վօլթէր , որ 80 տարեկան էր ,  
Ֆէսնէյի բնակութիւնը թողուց իռէն անուն  
ողբերգութիւնը ներկայացնել տալու համար :  
Ֆռանքլէն խմանալով որ Վօլթէր Փարիզ կը  
գտնուի , փութով գնաց տեսնուելու այս մեծ  
Փիլիսոփային հետ և իր տաղանդին պէտք  
եղած մեծ արանքներն ընելու : Վօլթէր , Պաս-  
թիլի բանտէն ազատուելէն յետոյ , Անգղիա  
քաշուած ատեն , Անգղիարէն սովորեցաւ , որ  
ատեն յարմար դատեց Անգղիական լեզուաւ  
յայտնել Ամերիկեան հասարակապետութեան

հիմնադրոյն ձեռքերը սեղմած ատեն զգացած յուզմունքն և ուրախութիւնը :

Քիչ ժամանակ յետոյ Ֆրանքլէն և Վօլթէր Աքատեմիայի մէկ նիստին իրարու քով նստած տեսնուեցան , ուր հասարակութիւնը մեծ գրուատիք իրաւ :

Երկու ծեր երիտասարդք չկարողացան իւրեանց արտասուքը բռնել մէկզմէկ համարելու ատեննին , ուր բոլոր հանդիսականք նոյն յուզմամբ արտասուեցին : Վօլթէր և Ֆրանքլէն 1783ին ընկերակցութեամբ Ամերիկա գացին : Ֆիլատէլֆիա մտնելու ատեննին ճշմարիտ յաղթութիւն մ' եղաւ թնդանօթի եւ զանգակներու : Յուզեալ և յափշտակեալ ժողովուրդ մը զանի իւր ձեռաց վրայ տարաւ մինչ իւր բնակարանն :

Ընդհանուր հաւանութեամբ Ֆիլատէլֆիոյ գերագոյն վճռաջինջ ատենի անդամ և Բանգիլվանի նահանգին նախագահ ընտրուեցաւ :

Հինգ տարի յետոյ , 1790 ապրիլ 17 ին , 84 տարեկան եղած ատեն մեռաւ . սոյն միջոցին Անթուան Պէնէզէթ բարեկամին գործը շարունակելու համար սեւերուն վաճառա-

կանութեան դէմ գրածն աւարտած էր : Սոյն բարերար մեծ անձին վերջին գործն արդիւնք եղած էր իր ողորմած մտաց և մարդասիրութեան :

Երբ իմացաւ Գաղղիա Ֆրանքլէնի մահը, Միռապօ , որ տունն առանձնացած էր հիւանդութեանառթիւ , երեսփոխանական ժողովրդագեց և բեմն ելլելով գոչեց , « Պարոնայք , Ֆրանքլէն մեռած և Ատուուածութեան գիրիը դարձած է , այն տաղանդն որ Ամերիկա ազատեց գերութենէ , և բոլոր Եւրոպան լուսաւորեց , կառաջարկեմ որ Ազգային ժողովը Պէնթամէն Ֆրանքլէնի սուգն երեք օր պահէ : » Միռապօի այս առաջարկութեան վրայ Լաֆայէթ ստքի ելլելով նոյնը պնդեց , և զոր ընդունուեցաւ յարգանօք և ընդհանուր հաճութեամբ :



## Ա Ջ Դ

Կժանուցուի Մեծապատիւ Գործակալաց եւ Ազգային վարժարանաց յարգելի Հոգարարձուաց եւ Դասատուաց քե որոշած ենք զործս ձեռքե ալ ծախել, մանաւանդ դպրոցաց աշակերտաց հատը 20 փարայի, իսկ վկայեալ աղքատ աշակերտաց համար միայն 10 փարայի, որ ըսել է ձրի, առնուած 10 փարան փութայի համար եղած ծախուց հաշուելով :

Գործոյս կանոնաւորութեան եւ յարատեւութեան համար պէտք եղած դիւրութիւնն ունենալու դիտմամբ կ'իսնդրենք մեն մի ընթերցողներէ, որք անմիջապէս իրենց որոշումն յայտնել բարեհաճին, յանձնելով ամեն մեկն իր տարեկան բաժանորդագինն, եքէ բաժանորդ ըլլալ հաճի, կամ եք ոչ անկորուստ յանձնէ գայն տեղւոյն Մեծ. Գործակալին, որպէս զի յաջորդ թուոց հրատարակումը ջուշանայ եւ քե քանի օրինակ տպագրելու պէտք ունենալնիս զիտնանք :

Այս առթիւ կժանուցանենք նաեւ, քե 1884է սկսեալ ամեն ամսոյ 15ին «Թ.Ա.Ն.Գ.Ա.Ր.Ա.Ն.Ս», իսկ ամեն ամսոյն 30ին ալ «Մ.Ա.Տ.Ե.Ն.Ա.Գ.Ա.Ր.Ա.Ն.Ս» պիտի հրատարակուի, որ սկսեալ է 1882 յունիս ամսէ, եւ որոյ 18 քիւերն արդէն հրատարակեալ են :

## Թ.Ա.Ն.Գ.Ա.Ր.Ա.Ն. ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

ԱՌՆՋԻՆ ՀԱՏՈՐԻ

*Zrusarashkay p'af*

Թիւ	Ամիս	Գին
1. Գիտութիւն	Յունվար 15.	20 փր.
2. Ֆուսնքէն	Փետրվար 15.	« «

ՄԱՄԿՈՅ ՏԱԿ

3. Աւարել Բանարբեանց
4. Կիրքենպերկ
5. Պիւժօն
6. Մովսես Խորենացի
7. Կալիկէ
8. Սօջօն
9. Միոսափօ
10. Ռափայել Մուրատ
11. Առակօ
12. Եղիշէ

مادنا تاران ژوغوورتیان

صحتہ و علمہ دائر رسالہ

اثر سرای همایون اطبا سندن

دوکتور مانویل پاروناق اوتجیان

در علیہدہ بک اوغلمتہ تارلہ باشندہ ذامباق سوقاغمتہ نومرو ۱۲

---

MADÉNATARAN JOGHOVERTTIAN

REVUE

Hygiénique et Scientifique

Rédigée par

**Docteur M. P. Utudjian**

*Médecin du palais Impérial*

Péra. Tarla-Bachi, Rue Zambac. N. 42

Constantinople

---

معارف نظارت جلیہ سنک رخصتیلہ طبع اولمشدر

3277-3279

2 02101

ՀՀ Ազգային գրադարան



NL0335461

ՀՀ Ազգային գրադարան



NL0335462

ՀՀ Ազգային գրադարան



NL0067563

